ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ
ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

№ 54/09

Քաղ. Երևան 28 ապրիլի 2009թ.

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ բողոքարկման խորհուրդ) հետևյալ կազմով՝ խորհրդի նախագահ Ա.Ֆ.Ազիզյան, անդամներ՝ Բ.Շ. Վարդանյան, Գ.Հ.Ադամյան, Ա.Ա.Տոնիկյան, Ա.Վ.Բաբայան և Լ.Ե.Ասցատրյան (քարտուղար), իր 2009թ. ապրիլի 28-ի նիստում (արձանագրություն № 69/1) քննարկեց «Գրանդ Քենդի» Հայ-Կանադական ՀՁ ՍՊԸ-ի 2009թ. փետրվարի 12-ի դիմումը CORPORACION HABANOS, S.A. (CU) ընկերության MONTE CRISTO (IR 799456) համակցված ապրանքային նշանի գրանցման գործողությունը չօգտագործման պատճառով ԱԾՄԴ-ի 30 և 33 դասերի ապրանքների համար վաղաժամկետ դադարեցնելու խնդրանքով:

Դիմողի փաստարկները հետևյալն են:

Դիմողը դիմումում նշել է, որ 2002թ. օգոստոսի 6-ին Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպությունը ՀՀ էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալությանը (այսուհետ՝ նաև ՀՀ մտավոր սեփականության գործակալություն) ծանուցել է ԱԾՄԴ 03, 21, 25, 30, 33 և 34-րդ դասի ապրանքների համար IR 799456 միջազգային գրանցմամբ MONTE CRISTO համակցված ապրանքային նշանի գրանցման գործողության տարածման մասին, որի գրանցման մասին հրապարակվել է 2003/Gaz., 15.05.2003թ.:

Սակայն «Գրանդ Քենդի» Հայ-Կանադական ՀՁ ՍՊԸ-ի կողմից Երևան քաղաքում և Հայաստանի Հանրապետության մի շարք մարզերում կատարված մարքետինգային ուսումնասիրությունների և հետազոտությունների արդյունքում պարզվել է, որ MONTE CRISTO ապրանքային նշանը իր սեփականատիրոջ՝ CORPORACION HABANOS, S.A. (CU) ընկերության կողմից գրանցման պահից սկսած չի օգտագործվել և չի օգտագործվում ԱԾՄԴ 30 և 33-րդ դասերի գրանցված բոլոր ապրանքների համար ավելի քան 5 տարի:

Ելնելով դրանից և առաջնորդվելով «Ապրանքային և սպասարկման նշանների, ապրանքի ծագման տեղանունների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև օրենք) 22-րդ հոդվածի 4-րդ մասով, համաձայն որի «Ապրանքային նշանի գրանցման գործողությունը կարող է ցանկացած անձի

դիմումի հիման վրա, բողոքարկման խորհրդի որոշմամբ, դադարեցվել վաղաժամկետ բոլոր ապրանքների, որոնց համար այն գրանցված է, կամ դրանց մի մասի նկատմամբ, եթե ապրանքային նշանի գրանցման թվականից հաշված 5 տարվա ընթացքում, կամ դիմումն ավելի ուշ ներկայացնելու դեպքում՝ դրան անմիջականորեն նախորդող 5 տարվա ընթացքում այն ընդհանրապես չի օգտագործվել կամ օգտագործվել է ոչ ողջամիտ ծավալներով ապրանքային նշանի սեփականատիրոջ կամ օրենքի 26 հոդվածի համաձայն՝ լիցենզային պայմանագրով այդ իրավունքն ունեցող անձի կողմից», դիմողը խնդրել է MONTE CRISTO (IR 799456) ապրանքային նշանի գրանցման գործողությունը Հայաստանի Հանրապետության տարածքում վաղաժամկետ դադարեցնել ԱԾՄԴ 30 և 33-րդ դասերի գրանցված բոլոր ապրանքների համար:

Բողոքարկման խորհուրդը «Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդ բողոքների և դիմումների ներկայացման և քննարկման կարգի» 35-րդ կետի համաձայն 25.02.09թ. հետծանուցմամբ փոստային առաքմամբ տեղեկացրել է MONTE CRISTO (IR 799456) ապրանքային նշանի սեփականատեր՝ CORPORACION HABANOS, S.A. (CU) ընկերությանը ROMARIN ապրանքային նշանների միջազգային գրանցումների հիմնապաշարում նշված նրա հասցեով (Avenida 3ra. No2006 entre 20 y 22 Miramar, Playa Ciudad de La Habana CUBA) բողոքարկման խորհրդի կողմից «Գրանդ Քենդի» Հայ-Կանադական ՀՁ ՍՊԸ-ի 2009թ. փետրվարի 12-ի դիմումը քննարկման ընդունելու, նիստի անցկացման թվականի (2009թ. ապրիլի 28) և վայրի մասին՝ կցելով դիմումի պատճենը: Չստանալով սեփականատիրոջից ոչ մի արձագանք, բողոքարկման խորհուրդը նպատակահարմար գտավ 25.03.09թ. ծանուցել նաև նրա ներկայացուցչին՝ Mr.RaOl Sancho Valladares-ին (Avenida 3ra. No2006 entre 20 y 22 Miramar, Playa Ciudad de La Habana CUBA): Սակայն համապատասխան փոստային ծանուցագրերը ետ չեն վերադարձել և որևէ տեղեկություն չկա այն մասին, թե հասցեատերերի կողմից ծանուցումները ստացվել են, թե ոչ:

Բողոքարկման խորհրդի 2009թ. ապրիլի 28-ի նիստին սեփականատիրոջ որևէ ներկայացուցիչ չի ներկայացել, ինչպես նաև բողոքարկման խորհուրդը դիմումի վերաբերյալ որևէ գրավոր արձագանք սեփականատիրոջից կամ նրա ներկայացուցչից չի ստացել:

Քննարկելով ներկայացված նյութերը դիմումում բերված հիմնավորումների շրջանակներում, հաշվի առնելով կոլեգիայի նիստում բողոքի ըստ էության քննարկման արդյունքները, բողոքարկման խորհուրդը հանգեց հետևյալ եզրակացության:

Օրենքի 22-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն ապրանքային նշանի օգտագործման ապացույցները ներկայացնում է դրա սեփականատերը, տվյալ դեպքում՝ CORPORACION HABANOS, S.A. (CU) ընկերությունը, որի պատշաճ ծանուցելու հնարավորությունները սպառված են, նկատի ունենալով 25.02.09թ. և 25.03.09թ. հետծանուցմամբ փոստային առաքմամբ ուղարկած ծանուցումները, սակայն ապրանքային նշանը 30 և 33-րդ դասերի համար ՀՀ-ում

օգտագործելու վերաբերյալ որևէ փաստ, ապացույց կամ որևէ գրավոր արձագանք սեփականատիրոջից կամ նրա ներկայացուցչից այդպես էլ չի ներկայացվել: Ելնելով դրանից, բողոքարկման խորհուրդը համարում է, որ CORPORACION HABANOS, S.A. (CU) ընկերության MONTE CRISTO (IR 799456) ապրանքային նշանը չօգտագործելու վերաբերյալ «Գրանդ Քենդի» Հայ-Կանադական ՀՁ ՍՊԸ-ի 2009թ. փետրվարի 12-ի դիմումում բերված փաստարկները հերքելու հիմքեր չկան, և դիմումը ենթակա է բավարարման:

Ելնելով դրանից և ղեկավարվելով օրենքի 22-րդ հոդվածի 4-րդ մասով, ինչպես նաև «Հայաստանի Հանրապետության առևտրի և տնտեսական զարգացման նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդ բողոքների և դիմումների ներկայացման և քննարկման կարգի» 79-րդ կետի «ա» ենթակետով բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

Բավարարել «Գրանդ Քենդի» Հայ-Կանադական ՀՁ ՍՊԸ-ի 2009թ. փետրվարի 12-ի դիմումը ամբողջովին և CORPORACION HABANOS, S.A. (CU) ընկերության MONTE CRISTO (IR 799456) համակցված ապրանքային նշանի գրանցման գործողությունը վաղաժամկետ դադարեցնել Հայաստանի Հանրապետության տարածքում 30 և 33 դասերի ապրանքների համար:

Բողոքարկման խորհրդի որոշումը կարող է օրենքով սահմանված կարգով բողոքարկվել դատարանում:

Բողոքարկման խորհրդի
նախագահ Ա.Ազիզյան